ԿԱՐԾԻՔ

Վիրաբ Ռուբիկի Համբարձումյանի՝ «Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմախնդիրները» վերտառությամբ, ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Զենքի ապօրինի շրջանառությունը հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետ գործիքակազմերից է, հետևաբար դրա դեմ արդյունավետ պայքարն իրավական պետության առաջնահերթություններից պետք է լինի: Այս համատեքստում առանձնակի կարևորություն ունի զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական քաղաքականության պատշաճ կազմակերպումը:

Հեղինակն արդարացիորեն նշել է, որ զենքի ապօրինի շրջանառությանը վերաբերող մի շարք հարցեր քրեական իրավունքով (օրենքով), ինչպես նաև հարակից իրավական ակտերով կարգավորման անհրաժեշտություն ունեն: Այդ հարցերի թվին են դասվում, մասնավորապես՝ զենքի շրջանառության ազատականացմանը վերաբերող հարցերը, զենքի շրջանառության և հանցավորության մակարդակի փոխկապվածությանը վերաբերող դատողությունները, անձանց շրջանակով պայմանավորված զենք ձեռք բերելու թույլտվության տրամադրմանն առնչվող հարցերը, ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ հանցանք կատարած անձանց զենքի թույլտվության տրամադրման բացառմանն առնչվող դրույթների նախատեսումը, սառը զենք կրելուն առնչվող որոշակի հարցերը, «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում հասկացությունների որոշակիացմանն առնչվող օրենսդրական կարգավորումների փոփոխման վերաբերյալ առաջարկները, ինչպես նաև զենքի թույլտվության ժամկետները լրանալուց հետո անձանց հետագա գործունեության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների նախատեսման վերաբերյալ առաջարկները:

Հեղինակի կողմից նման խնդրահարույց, քրեական իրավունքի տեսությունում միանշանակ պատասխաններ և լուծումներ չունեցող հարցերի, ինչպես նաև առկա կարգավորումների ժամանակավրեպ լինելու թիրախավորված վերհանումը և հետազոտումը վկայում են հետազոտվող թեմայի արդիականության և հրատապության մասին:

Աշխատանքը շարադրված է տրամաբանական հաջորդականությամբ, թեմայի շրջանակում քննարկվող ենթահարցերի գրագետ առանձնացմամբ: Այն բաղկացած է ներածությունից, 3 գլխից, դրանցում ներառված ընդհանուր թվով 8 պարագրաֆից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքն աչքի է ընկնում հետազոտության իրականացման համար կիրառված պատշաճ մեթոդաբանությամբ, մեծաքանակ և արդիական աղբյուրներով, դրանց կատարված պատշաճ հղումներով:

Ներածությունում հեղինակը հիմնավորել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացրել հետազոտության նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը, հետազոտության իրավական և փորձառական հիմքերը, հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և հետազոտության գիտական նորույթը:

Ատենախոսության՝ «Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական արգելքը սահմանող օրենսդրության սոցիալական հիմնավորվածությունը» վերտառությամբ 1-ին գլխում հեղինակն անդրադարձել է զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն սահմանող իրավանորմերի ընդունմանը, ինչպես նաև վերլուծվել է զենքի շրջանառության ազատականացման վերաբերյալ դրական և բացասական կողմերը:

Տվյալ գլխի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքներով՝ հեղինակը կատարել է արժեքավոր մի շարք եզրակացություններ, որոնցից կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները.

- Զենքի հետ ապօրինի «շփումների» համար պատասխանատվություն նախատեսող իրավանորմերի ամբողջությունը հանդիսանում է կանխարգելիչ միջոց, որը չեզոքացնում է զենքի ապօրինի շրջանառությունից բխող՝ հասարակական կարգի, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար վտանգ ստեղծող պայմանները:
- Զենքի մասնավոր ձեռքբերման նկատմամբ հսկողության խստացումը աննշան ազդեցություն է ունենում հանցավորության մակարդակի վրա, և չկա որևէ հստակ

փաստ այն մասին, որ խիստ վերահսկողությունը որևէ կերպ սահմանափակում է հանցավոր տարրերի հասանելիությունը դրան:

- Անձանց կողմից զենքը հաճախ օգտագործվում է ինքնապաշտպանության նպատակով, և զենքի շրջանառության ազատականացումը կարող է ընդհանուր կանխարգելիչ միջոց լինել հանցավոր ոտնձգությունների դեմ պայքարում: Հանցագործության զոհի ինքնապաշտպանական գործողությունները զգալի ազդեցություն են ունենում հանցագործության «արդյունքի» վրա, և զինված դիմադրության հետևանքները, տարբերվում են անզեն դիմադրության հետևանքներից:

Ատենախոսության՝ «Զենքի շրջանառության միջազգային իրավական կարգավորումները մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում» վերտառությամբ 2-րդ գլխում հետազոտվել են զենքի շրջանառության միջազգային իրավական կարգավորումները, ինչպես նաև քաղաքացիական զենքի շրջանառությունը կանոնակարգող տարածաշրջանային համաձայնագրերը և տիպային օրենքները: Բացի այդ, առանձնացվել են ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մարմինների և մեխանիզմների կողմից պետություններին հասցեագրված առավել կարևոր առաջարկներն ու միջոցառումները, որոնք միտված են մարդու իրավունքների պաշտպանության նպատակով արդյունավետ կերպով կարգավորել քաղաքացիական անձանց կողմից հրազենին հասանելիությունը:

Իրականացված հետազոտության արդյունքում կատարվել են մի շարք եզրակացություններ, որոնք հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմել զենքի շրջանառության ներպետական կարգավորման ընդհանուր վիճակի վերաբերյալ՝ ուրվագծելով նաև ներպետական օրենսդրության կարգավորումների արդիականացման և իրավական մոդելավորման հեռանկարը:

Այս գլխի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքներով՝ հեղինակը կատարել է արժեքավոր մի շարք եզրակացություններ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Գործող իրավակարգավորումների պայմաններում զենք ձեռք բերելու թույլտվություն չի տրվում այն անձանց, որոնք դատապարտվել են հրազենի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, մինչդեռ հասարակական անվտանգության, անձանց կյանքի, առողջության, ինչպես նաև պետական մարմինների և կազմակերպությունների բնականոն գործունեության համար վտանգ

ստեղծող զենքի մյուս տեսակներով (սառը, նետողական և այլն) կամ ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ դիտավորյալ հանցագործություն կատարած անձանց համար օրինական զենք ձեռք բերելու որևէ արգելք նախատեսված չէ: Ըստ էության, օրենսդրությամբ նախատեսված նման տարբերակված մոտեցումը որևէ կերպ հիմնավորված չէ և չի բխում սույն ոլորտում ընդունելի կարգավորումների տրամաբանությունից:

Հեղինակն առաջարկել է օրենսդրորեն բացառել զենքի թույլտվությունների տրամադրումը զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութի կամ պայթեցման սարքի գործադրմամբ դիտավորյալ հանցանք կատարելու համար դատապարտված անձին՝ անկախ այդ անձի դատվածությունն օրենքով սահմանված կարգով վերացված կամ մարված լինելու հանգամանքից:

- Բացի այդ, գործող իրավակարգավորումների պայմաններում զենք ձեռք բերելու թույլտվություն կարող են ստանալ անձինք, ովքեր նախկինում դատապարտվել են այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարելու համար, որոնք ուղղված են ինչպես անձի կյանքի (օրինակ՝ սպանության) կամ առողջության (օրինակ՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու), այնպես էլ այլ՝ սեփականության (օրինակ՝ ավազակության) կամ հասարակական անվտանգության (օրինակ՝ քրեական ստանալու կամ աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, պահպանելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու) դեմ: Նման իրավիճակը սպառնալիք է պարունակում անձի, հասարակության և պետության անվտանգության տեսանկյունից:

Հեղինակն առաջարկել է օրենսդրորեն բացառել զենքի թույլտվությունների տրամադրումը ծանր կամ առանձնապես ծանր հանցանքներ կատարած անձին՝ անկախ այդ անձի դատվածությունը վերացված կամ մարված լինելու հանգամանքից:

Ատենախոսության՝ «Զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի, այլ նյութերի, սարքերի և առարկաների ապօրինի շրջանառության համար պատասխանատվություն նախատեսող հանցակազմերի քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ 3-րդ գլխում հեղինակը հետազոտման է ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքի 334-ից 339-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների տեսակային և անմիջական օբյեկտը, ինչպես նաև առարկան: Այս համատեքստում բացահայտվել են քննարկվող հանցագործությունների անմիջական օբյեկտի բովանդակության վերաբերյալ

գոյություն ունեցող տարբեր մոտեցումները: Բացահայտվել և վերլուծվել են նաև հանցագործությունների առարկա հանդիսացող՝ հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի, ակոսափող հրազենի փամփուշտների, պայթուցիկ նյութի, պայթեցման սարքի, քաղաքացիական ողորկափող հրազենի, գազային, օդաճնշիչ, սառը և նետողական զենքի բովանդակությունը:

Այս համատեքստում կարևոր են հեղինակի հետևյալ եզրակացությունները և առաջարկությունները:

- ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը հանդես է գալիս որպես ինքնուրույն հանցագործություն և դուրս է ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի շրջանակից: Այն դեպքում, երբ ինքնաշեն կամ կառուցվածքային փոփոխությունների ենթարկված քաղաքացիական ողորկափող հրազենի շրջանառությունը (իրացնել, պահել, փոխադրել, առաքել կամ կրել) իրականացնում է այն անձը, ով պատրաստել կամ ձևափոխել է այն, ապա վերջինի արարքն անհրաժեշտ է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ և 336-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համակցությամբ: Տվյալ դեպքում, ըստ էության, գործ ունենք հանցանքների անխուսափելի համակցության հետ:
- Հեղինակն առաջարկել է նաև ՀՀ քրեական օրենսգրքում սահմանել նոր հանցակազմ (Հոդված 334.1), ըստ որի պատասխանատվություն է սահմանվում՝ հանրային վայրում դանակ (բացառությամբ մինչև 60մմ երկարության շեղբով կամ սայրով ծալովի դանակի), կոփազենք լախտ, մահակ, կամ կտրող, ծակող, հարվածող, ջարդող այլ առարկա կրելու համար:

Արժեքավոր են հեղինակի կողմից ներկայացված նաև այն առաջարկները, որոնք ուղղված են «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում մի շարք հասկացությունների լրամշակմանը, քանի որ նշված հասկացությունների վերաձևակերպման արդյունքում իրավական համակարգը կբարելավվի, քանի որ առկա կլինեն որոշակիության տեսանկյունից առավել որակյալ իրավանորմեր:

Ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշ նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին:

1. Հեղինակն առաջարկում է զենքի թույլտվության ժամկետը լրանալուց հետո անձանց տրամադրել 2 ամիս ժամկետ, որպեսզի վերջինները դիմեն իրավասու մարմին թույլտվության ժամկետը երկարաձգելու համար, ինչպես նաև մշակել և ներդնել

համապատասխան էլեկտրոնային ծրագիր, որի միջոցով հնարավոր կլինի նախապես անձանց ծանուցել թույլտվության ժամկետների ավարտին մոտենալու վերաբերյալ: Աշխատանքում նշվում է նաև, որ երկամսյա ժամկետը լրանալուց հետո, երբ զենքի թույլտվության ժամկետն օրենքով սահմանված կարգով չի երկարաձգվել, ապա խաթարվում է զենքի շրջանառության իրավական ռեժիմը և նման պայմաններում անձը (իրավաբանական անձը) ենթակա է քրեական պատասխանատվության զենքի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածներով:

Այս առումով հարկ ենք համարում, նախնառաջ անդրադառնալ լրացուցիչ երկամսյա ժամկետի տրամադրմանը: Կարծում եմ՝ անհրաժեշտություն չկա զենքի թույլտվության ժամկետը երկարաձգել այն պատճառով, որ անձը կարողանա վերստին երկարաձգել թույլտվության ժամկետը, մանավանդ այն պարագայում, երբ Հեղինակն առաջարկում է ներդնել նաև ծանուցման էլեկտրոնային ծրագիր, որը կհիշեցնի անձանց (իրավաբանական անձանց) զենքի թույլտվության ժամկետների ավարտին մոտենալու վերաբերյալ: Հետևաբար՝ ավելի նպատակահարմար կլիներ զենքի թույլտվության ժամկետի ավարտից հետո 2 ամիս անձին (իրավաբանական անձին) հավելյալ ժամանակ տրամադրելու փոխարեն, նույն ծանուցման եղանակով զենքի թույլտվություն ունեցող սուբյեկտներին հիշեցնել ժամկետի ավարտին մոտենալու մասին, առանց այն երկարացնելու:

Այսինքն՝ եթե Հեղինակի մոտեցումը կայանում է նրանում, որ զենքի թույլտվության ժամկետի պատշաճ ձևով չերկարաձգելը կարող է հանգեցնել հանցակազմի առկայությանը, ապա որոշակիորեն փաստարկված չէ, թե ինչ չափանիշով է որոշվել երկու ամիս ժամկետը և արդյոք դա արդարացված է, քանի որ ստացվում է՝ այդ ժամկետով անձի մոտ շարունակվելու է գտնվել անօրինական զենք: Ընդ որում, շատ ավելի ամբողջական կլիներ, որ աշխատանքում նշվեր (քննարկվեր), թե այդ երկու ամսվա ընթացքում զենքը պետք է հանձնվի իրավասու մարմնի պատասխանատու պահպանությանը, թե ոչ, քանի որ անդրադարձ է կատարվել միայն զենքի կրման և օգտագործման հանգամանքին:

Բացի այդ, վերը նշված հարցի շուրջ ցանկալի կլիներ աշխատանքում ուսումնասիրման առարկա դարձնել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 282-րդ հոդվածը, քանի որ նշված հոդվածում կարգավորվում է սեփականության իրավունքը դադարելու հետ կապված այն դեպքերը, երբ գույքն անձին չի կարող պատկանել: Նշված պայմաններում հնարավոր է, որ անձը՝ որպես ժառանգություն ստանա զենք, սակայն օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով չունենա դրա նկատմամբ սեփականության իրավունք: Ավելի հստակ, օրինակ՝ տանը

գտնվող հրազենը ծնողի մահից հետո ժառանգաբար փոխանցվի զավակին, որպիսի պայմաններում զենք կրելու և/կամ պահելու հարցը քրեաիրավական տեսանկյունից ինչպես պետք է կարգավորվի:

2. Հետաքրքիր կլիներ նաև հեղինակի կարծիքը լսել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 339-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված հափշտակության կամ շորթման պարագայում անձի քրեական պատասխանատվության հարցը լուծելու վերաբերյալ:

ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսված պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով այնպիսի արարք կատարելու համար, որը դուրս է իր լիազորությունների շրջանակից և էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին: Հարկ է նաև արձանագրել, որ 441-րդ հոդվածի 2-րդ մասում հանցակազմի արտոնյալ դրսևորումների համար որպես պատիժ է նախատեսված ազատազրկումը՝ չորսից ութ տարի ժամկետով: Համապատասխանաբար 338-րդ և 339-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելու համար ևս որպես պատիժ է նախատեսված ազատազրկումը՝ չորսից ութ տարի ժամկետով: Ասվածից պարզ է դառնում, որ եթե անձն իր իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելով կատարի զենքի հափշտակություն կամ շորթում և միաժամանակ արարքում առկա լինի նաև ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածով նախատեսված ծանրացնող հանգամանքներից որևէ մեկը, ապա 52-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնի համաձայն՝ անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվի միաժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ կամ 339-րդ հոդվածներով նախատեսված ծանրացնող հանգամանքով, այն է՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով արարք կատարելու և ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որևէ ծանրացնող հանգամանքով:

Ստացվում է, որ իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելու հանգամանքն անձին մեղսագրվում է երկու անգամ, առաջինը զենքի ապօրինի շրջանառության դեմ ուղղված հանցանք կատարելու դրվագով և երկրորդ անգամ՝ հանրային ծառայության դեմ ուղղված հանցանք կատարելու դրվագով (ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդված): Կցանկանայինք լսել հեղինակի կարծիքն առ այն, թե արդարացված է արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 339-րդ հոդվածներում «*իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով*» զենքի հափշտակություն կամ շորթում կատարելու ծանրացնող հանգամանքի առկայությունը:

3. Աշխատանքում մանրամասն ուսումնասիրվել են Նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 5-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասերով նախատեսված խրախուսական նորմերը, ՀՀ վճռաբեկ դատարանի վերաբերելի որոշումները, ինչպես նաև ՌԴ քրեական օրենսգրքի համապատասխան նորմերը: Ուսումնասիրության արդյունքում Հեղինակը եկել է այն եզրահանգման, որ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ ապօրինի պահող զենքի գործադրմամբ արարք կատարելուց հետո, զենքը կամովին հանձնած անձի նկատմամբ խրախուսական նորմի կիրառման արգելքի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումը չի բխում քրեական քաղաքականությունից, քանի որ այդ դեպքում անձի մոտ կբացակայի օրինապահ վարքագիծ դրսևորելու շարժառիթը:

Կարծում եմ՝ գիտական ուսումնասիրությունը շատ ավելի կշահեր և հնարավոր կլիներ ավելի հիմնավոր դատողությունների հանգել այն պարագայում, երբ հեղինակը քննարկման առարկա դարձներ նաև հանցակազմերի տեսակները, այն է՝ դրանց ձևական լինելը: Ուսումնասիրության առարկա հանդիսացող հանցակազմը ձևական է և հայտնի է, որ այն ավարտված համարելու համար հետևանքի առկայությունը պարտադիր չէ: Հետևաբար, պետությունն ինչպես Նախկին, այնպես էլ գործող քրեական օրենսգրքերում զենքի ապօրինի շրջանառությունն այնքան վտանգավոր է դիտել, որ միայն դրա կրելը կամ պահելն, արդեն իսկ դիտել է որպես ավարտված հանցագործություն: Ուստի այն դեպքերում, երբ անձն ապօրինի պահվող զենքով կատարում է հանցանք, ստացվում է, որ զենքի ապօրինի շրջանառության համար նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատելու խրախուսական նորմը, առերևույթ, հնարավոր է չի կարող ծառայել իր նպատակին, քանի որ արդեն իսկ ավարտված համարվող ձևական հանցակազմի առարկա հանդիսացող զենքը գործադրվել է և մեկ այլ հակաիրավական արարք է կատարվել, որի

պայմաններում վտանգավորության աստիճանն էլ ավելի բարձր է: Հետևապես, նման պայմաններում Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը Նախկին քրեական օրենսգրքի գործողության պարագայում, ըստ էության, բխել է պետության քրեական քաղաքականությունից:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խրախուսական նորմին, ապա հեղինակն առավելապես անդրադարձել է անձին ձերբակալելու, ապացուցողական կամ օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելու ընթացքում տեղի ունեցող իրադարձություններին, սակայն ցանկալի կլիներ նաև անդրադառնալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2023 թվականի նոյեմբերի 10-ի Միշա Մուրադյանի վերաբերյալ թիվ ԵԴ/1424/01/21 քրեական գործով կայացված որոշմանը, որում խրախուսական նորմի գործողությունը պայմանավորվել է *իրավասու մարմինների կողմից դրանց գտնվելու վայրի մասին իմանալով*: Այս համատեքստում կարևոր է լսել Հեղինակի կարծիքը ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված ձևական հանցակազմի համար քրեական պատասխանատվությունից իմպերատիվ կերպով ազատող դրույթի վերաբերյալ գիտական, ինչպես նաև քրեական քաղաքականությանը համահունչ լինելու տեսանկյունից:

Ներկայացված նկատառումները, սակայն, չեն նսեմացնում կատարված աշխատանքի գիտական արժեքը և դրական գնահատականը:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ քննարկվող ատենախոսությունը հավաստի և արժանահավատ, գիտականորեն հիմավորված ու փաստարկված հետազոտության արդյունք է, որն ապահովվել է արդի իրավագիտության մեթոդաբանության կիրառմամբ, հարուստ տեսական գրականության, նորմատիվ աղբյուրների և փորձառնական տվյալների լայն օգտագործմամբ:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Վիրաբ Ռուբիկի Համբարձումյանի «Զենքի ապօրինի շրջանառության քրեաիրավական հիմախնդիրները» վերտառությամբ ԺԲ.00.05՝ «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ Կառավարության 08.08.1997թ. թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին: Այսինքն՝ տվյալ ատենախոսությունը կարելի է գնահատել իբրև գիտության

տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում: Հետևաբար, ատենախոսն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Արման Հովհաննիսյան

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Արման Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
դեկանի տեղակալ

Աշոտ Պետրոսյան

22.06.2026թ.